# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 15)

30 նոյեմբերի 2012թ. ժամը 15<sup>00</sup>

1. «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին:
(Հ Հարությունյան)

2. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բախշում» ծրագրի մասին:
(Անահիտ Մխոյան)

3. «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետեվանք» ծրագրի մասին:
(Նարինե Մելքոնյան)

### 4. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

4.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.3 Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.4 Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N2):

4.5 Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Գրքի ր հրատարակչության գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.6 «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական բարեգործական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.7 «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին ։



4.8 Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ։

4.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):

4.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Այբ» կրթական հիմնադրամ ):

4.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

4.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր (N1):

4.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):

### 5. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Արման Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի մանկուկների հիմնադրամ):

5.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-904-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանև կուսաստան» բարեգործական կազմակերպություն):

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Այբ» կրթական հիմնադրամ):

5.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Այբ» կրթական հիմադրամ):

5.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-119-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N1) (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյու):

5.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-119-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N2) (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյու):

5.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր ):

5.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրին ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր):

5.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ):

5.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ (N1):

5.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի N Մ-511-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Խոսրովի անտառ» պետական արգելոց»ՊՈԱԿ):

5.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 29-ի N Մ-130-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու ու նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի):



5.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի N Մ-470-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու ու նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Արևիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ):

5.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի N Մ-512-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու ու նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ):

5.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

5.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-501-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

5.17 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

5.18 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 2 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

5.19 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 31-ի N Մ-672-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ):

5.20 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի N Մ-741-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ):

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---- ------------ 2012 թվականի N Մ- -Ա 15/1

## «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 13-ի N 3/3.8-1/14748-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 13-ի N 02/7065-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N ԴԴ/22/11122-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N ՎՄ/3-4/11918-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խմբի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, ՀՎՀՀ՝ 02507171) իրականացվող՝ 667888 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խմբին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ առողջապահության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Ս.Քրմոյանի կողմից
«01» 11 .........2012թ.

«Առողջապահական համակարգի հզորացում»

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Առողջապահական համակարգի հզորացում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է, ՀՀ կառավարության 2003թ. Հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» համաձայն օգտվել ԱԱՀ-ի և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ 1214 Վերներ, Ժնև, Շվեյցարիա |
| 4. | Ծրագրի կատարողը | ՀՀ առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խումբ Կառավարական տուն 3, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն ՀՎՀՀ 02507171 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսվում է կազմակերպել միջոցառումներ ք. Երևանում և ՀՀ մարզերում: Ծրագրի բնագավառը՝ առողջապահություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 667 888 (վեց հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր ութսունութ) եվրոյին համարժեք դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Պալիատիվ/ամոքիչ խնամք ստացող հիվանդները, դոնորական արյուն ստացողները, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի բուժմամբ և կանխարգելմամբ զբաղվող բժիշկ/բուժքույրերը, առողջապահության նախարարությունը և |

15/1

| | | | |
|---|---|---|---|
| | | | բուժհաստատությունները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | | 2012 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2015 թվականի մարտի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | | Սույն ծրագիրը հանդիսանում է 2010 թ.-ի ապրիլի 30-ի N Մ282-Ա ծրագրի 2-րդ փուլը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ |
| | | **Նպատակ 1** | Մշակել Ազգային առողջապահական համակարգի զարգացման հնգամյա ծրագիր և առողջապահական ոլորտի ենթառազմավարական ծրագրեր: |
| | | Նկարագրություն | Մշակել համակարգի զարգացման հնգամյա ծրագիր և առողջապահական ոլորտի ենթառազմավարական ծրագրեր: |
| | | Եռամսյակ IV | 67 447.7 եվրո |
| | | **Ընդհանուր 1 Տարի** | **67 447.7 եվրո** |
| | | Եռամսյակ I | 36 640 եվրո |
| | | Եռամսյակ II | 1 053,3 եվրո |
| | | Եռամսյակ III | 1 053,3 եվրո |
| | | Եռամսյակ IV | 1 053,3 եվրո |
| | | **Ընդհանուր 2 Տարի** | **39 799,9 եվրո** |
| | | Եռամսյակ I | 0 |
| | | Եռամսյակ II | 0 |
| | | Եռամսյակ III | 0 |
| | | Եռամսյակ IV | 0 |
| | | **Ընդհանուր 3 Տարի** | **0** |
| | | Եռամսյակ I | 0 |
| | | **Ընդհանուր 4 Տարի** | **0** |
| | | **Ընդամենը 1, 2, 3 և 4 տարիներ** | **107 247.6 եվրո** |
| | | **Նպատակ 2** | Փորձարկել և ազգային առողջապահական համակարգում ներդնել պալիատիվ/ամոքիչ խնամք: |
| | | Նկարագրություն | Պիլոտային տեղամասերում փորձարկել պալիատիվ /ամոքիչ խնամք, մշակել պալիատիվ խնամքի ներդրման առաջարկություններ, կազմակերպել ամոքիչ խնամքին նվիրված կրթական դասընթացներ բժիշկ/բուժքույրերի համար: |
| | | Եռամսյակ IV | 32 209 եվրո |
| | | **Ընդհանուր 1 Տարի** | **32 209 եվրո** |
| | | Եռամսյակ I | 19 573 եվրո |

15/1

| | |
|---|---|
| Եռամսյակ II | 8 913 եվրո |
| Եռամսյակ III | 14 513 եվրո |
| Եռամսյակ IV | 13 913 եվրո |
| **Ընդհանուր 2 Տարի** | **56 912 եվրո** |
| Եռամսյակ I | 9 513 եվրո |
| Եռամսյակ II | 0 |
| Եռամսյակ III | 5 000 եվրո |
| Եռամսյակ IV | 5 000 եվրո |
| **Ընդհանուր 3 Տարի** | **19 513 եվրո** |
| Եռամսյակ I | 0 |
| **Ընդհանուր 4 Տարի** | **0** |
| **Ընդամենը 1, 2, 3 և 4 տարիներ** | **108 634 եվրո** |
| **Նպատակ 3** | Հզորացնել Ազգային առողջապահական տեղեկատվական համակարգը և ինտեգրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի ծրագրերը տեղեկատվական համակարգում: |
| Նկարագրություն | Մշակել առողջապահական տեղեկատվական համակարգի զարգացման հնգամյա ծրագիր, հզորացնել առողջապահական տեղեկատվական համակարգի շրջանային կարողությունները, ինտեգրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի ծրագրերը տեղեկատվական համակարգում: |
| Եռամսյակ IV | 13 490.7 եվրո |
| **Ընդհանուր 1 Տարի** | **13 490.7 եվրո** |
| Եռամսյակ I | 2 122.5 եվրո |
| Եռամսյակ II | 2 170 եվրո |
| Եռամսյակ III | 2 170 եվրո |
| Եռամսյակ IV | 2 170 եվրո |
| **Ընդհանուր 2 Տարի** | **8 632.5 եվրո** |
| Եռամսյակ I | 2 170 եվրո |
| Եռամսյակ II | 865 եվրո |
| Եռամսյակ III | 865 եվրո |
| Եռամսյակ IV | 0 |
| **Ընդհանուր 3 Տարի** | **3 900 եվրո** |
| Եռամսյակ I | 0 |
| **Ընդհանուր 4 Տարի** | **0** |
| **Ընդամենը 1, 2, 3 և 4 տարիներ** | **26 023.2 եվրո** |
| | |

| | |
|---|---|
| **Նպատակ 4** | Շարունակել Արյան անվտանգության ազգային ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացումը: |
| Նկարագրություն | Իրագործել Արյան անվտանգության ազգային ռազմավարությունը, մշակել և բաժանել արյան անվարձահատույց դոնորությունը խրախուսող նյութեր, վերազինել մարզային արյան փոխներարկման կայանները և մշակել տեղեկատվական համակարգ: |
| Եռամսյակ IV | 164 462,8 եվրո |
| **Ընդհանուր 1 Տարի** | **164 462,8 եվրո** |
| Եռամսյակ I | 18 867.5 եվրո |
| Եռամսյակ II | 1 352.5 եվրո |
| Եռամսյակ III | 2 802.5 եվրո |
| Եռամսյակ IV | 73 752.5 եվրո |
| **Ընդհանուր 2 Տարի** | **96 775 եվրո** |
| Եռամսյակ I | 1 352,5 եվրո |
| Եռամսյակ II | 1 150 եվրո |
| Եռամսյակ III | 2 500 եվրո |
| Եռամսյակ IV | 55 500 եվրո |
| **Ընդհանուր 3 Տարի** | **60 502,5 եվրո** |
| Եռամսյակ I | 700 եվրո |
| **Ընդհանուր 4 Տարի** | **700 եվրո** |
| **Ընդամենը 1, 2, 3 և 4 տարիներ** | **322 440.3 եվրո** |
| **Նպատակ 5** | Նպաստել զերակայող հիվանդությունների ՏԲ-ի բուժման համար նախատեսված դեղերի ռացիոնալ կիրառմանը: |
| Նկարագրություն | Կազմակերպել հակատուբերկուլոզային դեղերի ռացիոնալ կիրառմանը նվիրված քարոզարշավ: |
| Եռամսյակ IV | 14 757.5 եվրո |
| **Ընդհանուր 1 Տարի** | **14 757.5 եվրո** |
| Եռամսյակ I | 2 872.5 եվրո |
| Եռամսյակ II | 0 |
| Եռամսյակ III | 0 |
| Եռամսյակ IV | 0 |
| **Ընդհանուր 2 Տարի** | **2 872.5 եվրո** |
| Եռամսյակ I | 0 |
| Եռամսյակ II | 0 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Եռամսյակ III | 0 |
| | | Եռամսյակ IV | 0 |
| | | **Ընդհանուր 3 Տարի** | 0 |
| | | Եռամսյակ I | 0 |
| | | **Ընդհանուր 4 Տարի** | 0 |
| | | **Ընդամենը 1, 2, 3 և 4 տարիներ** | **17 630 եվրո** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման 4 տարիների ընթացքում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) ստորև նշված ապրանքները ու ծառայությունները.<br>1. Արյան փոխներարկման կայանների վերազինում (բժշկական սարքավորումներ, բժշկական ծախսանյութեր, պահպանման ծախսեր և այլն), դեղեր – 149 554 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 90 112 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 55 178 եվրոյին համարժեք դրամ (3 տարի); ընդամենը՝ 294 844 եվրոյին համարժեք դրամ<br>2. Ռազմավարություններ և կրթական նյութերի մշակում, ծրագրի փորձարկում – 69 384 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 73 013 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 13 726 եվրոյին համարժեք դրամ (3 տարի), 643 եվրոյին համարժեք դրամ (4 տարի); ընդամենը՝ 156 764 եվրոյին համարժեք դրամ<br>3. Դասընթացների կազմակերպում, հանդիպումներ, թարգմանություն, տեխնիկական աջակցություն – 45 860 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 32 533 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 11 640 եվրոյին համարժեք դրամ (3 տարի); ընդամենը՝ 90 033 եվրոյին համարժեք դրամ<br>4. Հետազոտություններ, մոնիթորինգային այցեր – 3 870 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 2 615 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 1 088 եվրոյին համարժեք դրամ (3 տարի); 38 եվրոյին համարժեք դրամ (4 տարի) ընդամենը՝ 7 611 եվրոյին համարժեք դրամ<br>5. Համակարգիչների ձեռք բերում, պահպանման ծախսեր և գրենական պարագաներ – 22 699 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 5 720 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 1 285 եվրոյին համարժեք դրամ (3 տարի), 20 եվրոյին համարժեք դրամ (4 տարի); ընդամենը՝ 29 724 եվրոյին համարժեք դրամ<br>6. Տեղեկատվական նյութերի տպագրություն – 1 000 եվրոյին համարժեք դրամ (1 տարի), 1 000 եվրոյին համարժեք դրամ (2 տարի), 1 000 եվրոյին համարժեք դրամ (3 տարի); ընդամենը՝ 3 000 եվրոյին համարժեք դրամ | |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական խածերը | Կազմակերպչական ծախսեր, որոնք ներառում են համակարգող խմբի աշխատավարձերը, հարկերը, համակարգող խմբի գրենական պիտույքներ, կապի և սուրհանդակային ծառայություններ, ադմինիստրատիվ պահպանման ծախսեր, աուդիտորական ծառայություններ – 85 913 եվրոյին համարժեք դրամ: | |
| 12. | Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի<br>- ՀՀ ֆինանսների նախարարության<br>- ՀՀ առողջապահության նախարարության<br>- ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ»-ի<br>- ՀՀ ԱՆ «Պրոֆեսոր Ռ.Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն»-ի<br>- ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն»-ի<br>- «Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ի<br>- Առողջապահության համաշխարհային կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների հետ: | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ՝<br>- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին,<br>- Հիմնադրամի տեղային գործակալին,<br>- ՀՀ առողջապահության նախարարությանը,<br>- ՀՀ ֆինանսների նախարարությանը,<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: | |

15/1

ՀՀ առողջապահության նախարարության
Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար — Հ.Հարությունյան

Ծրագիրը կազմեց՝
ՀՀ առողջապահության նախարարության
Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ֆինանսական ղեկավար — Է. Գալայան
Հեռ՝ 54 36 51

15/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

13.11.12թ. №3/3-8/14748-12

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 07.11.12թ. N 15/15.4/16041-12 գրության՝ կապված «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Կ. Աղաջանյան հեռ. 595-229

N034/30038-12
13.11.12թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 15/1

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

13.11.12թ. N02/7065-12

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 7-ի
15/15.4/16041-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

N035/30044-12
13.11.12թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

15/1

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

08.11.12 N 77/22/11122-12

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.11.2012թ. թիվ 15/15.4/16041-12 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խմբի կողմից իրականացվող «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

???? ?????????
Nov 8 2012 3:07 PM

Կատարող՝ Նաիրա Փափախյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժին
հեռախոս 52 27 21

N 020/29581-12
08.11.12թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

15/1

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

09.11.12 N 77/15-1/11179-12

Ձեր N ____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 14.11.2012թ. թիվ 15/15.4/16041-12 գրության՝ հայտնում եմ, որ «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

???? ?????????
Nov 9 2012 3:09 PM

Կատարող՝
ՀՀ ԱՆ ԳՀ ԾՀԽ իրավաբան
Մարիամ Էլիբեկյան
Հեռ.՝ 54 36 51

N 020/29690-12
09.11.12

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

15/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060 54 43 02

N ՎՄ3-4/11918-12
09.11.12թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.11.2012թ. թիվ 15/15.4/16041-12 գրությանը կից ներկայացված «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.060 544652

N 044/29628-12
09.11.12թ.

**Ն Ա Խ Ա Գ Ի Ծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**— ———— 2012 թվականի N Մ- -Ա** 15/2
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-ԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԵԼԴՔԻՐԽԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 21-ի N 3/3.8-2/15153-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 19-ի N ՎՄ/3-6/12353-12, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 19-ի N 01/5544-12, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 19-ի N 101/104.3/6379-12 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 01/15/4965-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 05514397) կողմից իրականացվող՝ 4003.4 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով՝ Ավստրիայից ստացված բեռը՝ (19258 կգ ընդհանուր քաշով, 4003.4 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 4977.3 եվրո, «Շիրակի» Տ/Մ) ներմուծվում է սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու ու Գեղարքունիքի մարզպետներին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Անահիտ Մխոյանի կողմից
«12» նոյեմբերի 2012թ.

«Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Ավստրիական Կարիտաս» ԲՀԿ-ի Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի և այլ կազմակերպությունների կարիքավոր շահառուներին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Կարիտաս Ավստրիա Ֆելդքիրխի գրասենյակ<br>Caritas Feldkirch<br>Wichnergasse 22, 6800<br>Feldkirch, Austria |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ<br>Գյումրի, Հ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն<br>ՀՎՀՀ 05514397 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզեր, ք. Երևան<br>բնագավառը՝ բարեգործական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 4003.4 Եվրո |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում իրականացվող ծրագրերի և այլ կազմակերպությունների մոտ 3000 շահառու (ցանկը ներկայացվում է ստորև): |

| # | Նկարագրություն | Մակարոն | Հագուստ | Կոշիկներ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնային Խնամք/Գյումրի | 700 | 168 | 15 |
| 2 | Տնային Խնամք/Վանաձոր | 500 | | |
| 3 | Տնային Խնամք/Գավառ | 300 | | |
| 4 | "Ծերերի Ցերեկային Կենտրոն" Գյումրի | 1675 | | |
| 5 | "Ծերերի Ցերեկային Կենտրոն" Տաշիր | 300 | | |
| 6 | "Փոքրիկ Իշխան " Գյումրի | 500 | | |
| 7 | "Փոքրիկ Իշխան" Վանաձոր | 500 | | |
| 8 | "Փոքրիկ Իշխան" Գավառ | 200 | | |
| 9 | "Փոքրիկ Իշխան" Տաշիր | 200 | | |
| 10 | ԱԱԴԿ | 800 | | |
| 11 | "Արեգակ" Հաշմանդամների կենտրոն | 400 | | |
| 12 | "Արամազդ" 5 Հասարակական կազմակերպություններ | 1500 | | |
| 13 | Հայ Կաթողիկե Առաջնորդարան | 3000 | | |
| 14 | "Տիրամայր Հայաստանի Կուսաստան" | 1000 | | |
| 15 | Հայ Առաքելական Եկեղեցի | 600 | | |
| 16 | "Խաչվող Ուղիներ" ԲՀԿ | 400 | | |
| 17 | Գյումրու ուսանողական խորհուրդ ՀԿ | 500 | | |
| 18 | "Իգդիր" ԲՀԿ | 500 | | |
| 19 | "Հանուն Բարության" Բարեգործական Հիմնադրամ | 500 | | |
| 20 | "Փրկություն" հաշմանդամ երեխաների և երտասարդների կենտրոն. ԲՀԿ | 500 | | |
| 21 | Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական Մասնաճյուղ | 100 | | |
| 22 | "Մանկավարժ" ԲՀԿ | 500 | | |
| 23 | "Լայթհաուս-Փարոս" բարեգործական հիմնադրամ | 400 | | |
| 24 | Ամերկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ | 500 | | |
| 25 | "Օրրան" ԲՀԿ | 800 | | |
| 26 | "ԱՌԴԱ" բարեգործական հիմնադրամ | 900 | | |
| 27 | "Փոքր Մհեր" կրթահամալիր | 500 | | |
| 28 | Գյուղ Լճավան/Գեղարքունիքի Մարզ | 500 | | |
| 29 | Բյուրակնի դպրոց | 300 | | |
| | Ընդամենը | 19075 | 168 | 15 |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 4 ամիս, 01.12.2012 - 01.04.2013 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ապրանքի ստացումից և պահեստավորումից հետո կկազմակերպվի պարագաների համապատասխան դասակարգումը՝ ըստ շահառուների ու կենտրոնների: Ապա կկազմակերպվի սննդի տեղափոխումը համապատասխան հաստատություններ («Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի առաջնային առողջության պահպանման կենտրոն, «Արեգակ» բազմակի հաշմանդամ երեխաների կենտրոն, «Փոքրիկ Իշխան» երեխաների սոցիալական կենտրոնները Գյումրիում, Վանաձորում, Գավառում և Տաշիրում, ՀԿ-ի կողմից Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում իրականացվող ծերերի աջակցման ծրագրի շահառուներԳյումրիի Կաթողիկե Առաջնորդարան, Հայկական Կարիտասի գործընկեր «Խաչվող Ուղիներ» ԱՀԿ /որի հետ համագործակցում ենք Վանաձորում Փոքրիկ Իշխան կենտրոնի շրջանակներում/,«Արամազդ» ծրագրում ներգրավված փախստական համայնքներ Շիրակի և Գեղարքունիքի մարզերում, կազմակերպություններ, որոնք ներկայացել են ՀՀ Կառավարության |

15/2

| | | |
|---|---|---|
| | | բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից, իսկ հագուստը անհատականորեն կբաշխվի Գյումրու, Վանաձորի և Գավառի ծերերին, ովքեր ներգրավված են «Տնային խնամք միայնակ ծերերին» ծրագրում: Բաշխումը նախատեսված է իրականացնել դեկտեմբեր-մարտ ամիսների ընթացքում: Բաշխման աշխատանքների իրականացման համար ծրագրի ղեկավարի կողմից կկազմվի համապատասխան խումբ՝ բաղկացած ծրագրի սոցիալական աշխատողներից և ծրագրի ղեկավարից: Յուրաքանչյուր ծրագրի/կենտրոնի ղեկավար կստանձնի պատասխանատվություն ապրանքի բաշխման/տեղակայման, մանրամասն անվանական և քաշային հաշվետվությունների տրամադրման համար բաշխման գործընթացից հետո 10 օրվա ժամանակահատվածում: «Հայկական Կարիտաս»-ը ամբողջական հաշվետվություն կներկայացնի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հագուստ, կոշիկ ու սնունդ (մակարոն): Արժեքը՝ 4003.4 եվրո (see table below) |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | - ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով;<br>- Պետական ինքնակառավարման մարմիններ ծրագրի իրականացման վայրերում;<br>- Սոցիալական ապահովության տարածքային գրասենյակներ;<br>- սոցիալական վարչություններ Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագիրությունը | Վերահսկողությունը կիրականացնի «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վարչական խորհուրդը և ավարտից հետո մանրամասն հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

| N | Միավոր | Նկարագրություն | Կիլոգրամ | Կգ-ի գինը ԵՎՐ | Ընդհանուր գինը ԵՎՐ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 59 տեղդիր | Լապշա /մակարոն/ | 19075 | 0.2 | 3815 | Վավերականություն՝ 6/2014 |
| 2 | 12 պարկ | Հագուստ | 90 | 1 | 90 | Նոր |
| 3 | 2 պարկ | Կոշիկ | 31 | 5 | 75 | Նոր |
| 4 | 9 պարկ | Հագուստ | 78 | 0.3 | 23.4 | Օգտագործված/ դիզինֆեկցիված |
| | | Ընդհանուր | 19258 | | 4003.4 | |

15/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

15/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21.11.12թ. №3/3.8-2/15151

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.11.2012թ. N 15/15.4/16534-12 գրությամբ ներկայացված «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Գևորգյան, հեռ. 595-227

N034/30791-12
21.11.12թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 15/2

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N ՂՄ/3-6/12353-12
19.11.12թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. նոյեմբերի 15-ի թիվ 15/15.4/16534-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին> որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանումներ ներմուծվող բեռի տրանսպորտային ծախսերի վերաբերյալ:

[signature] **Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ**

կատարող՝ Վ. Սարգսյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 060 54 43 49

N044/30607-12
19.11.12թ

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ** 15/2

<< 19 >> 11 2012թ.
N: 01/5544-12

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 15.11.2012թ.
թիվ՝ 15/15.4/16534-12

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Չենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝ [signature] Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

N116/30626-12
19.11.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ 15/2

ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1 /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ 101/104.3/6379-12
«19» 11 2012 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 15.11.2012թ. թիվ 15/15.4/16534-12 գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Լոռու մարզպետարանը չի առարկում «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագիրը բարեգործական որակելուն:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

N 114/30546-12
19.11.12թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ 15/2

ք. Գավառ , Գ. Լուսավորչի փ. 36
Հեռ. /0264/2-10-45, Ֆաքս /0264/2-41-75
Կայք gegharkunik.region.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am
N 01/15/4965-12
22 11 2012թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
/Ձեր՝2012-11-15 թիվ 15/15.4/16534-12/

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 13-րդ կետի համաձայն, հավանություն է տալիս Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագրի մասին» որոշման նախագծին:

Հարգանքով՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. Մնացականյան
0-264-2-38-75

N 113/31011-12
22.11.12թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանումներ ներմուծվող բեռի տրանսպորտային ծախսերի վերաբերյալ: | - Կազմակերպությունը ներկայացրել է պարզաբանում (կցվում է): |
| | |
| | |

15/2

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ
Հ. Սարգսյան փող, նրբանցք 3, տուն 8
Գյումրի, Հայաստան
Հեռ. (374312) 57201 / Ֆաքս. (374312) 57849
Էլ-փոստ.caritas@cararm.am
www.caritasarm.am

ARMENIAN CARITAS
8, sidestreet 3, H. Sargissian St,
Gyumri, Armenia
Tel: (374312) 57201 / Fax: (374312) 57849
E-mail: caritas@cararm.am
www.caritasarm.am

5/2

AC-274-12

26 նոյեմբերի, 2012թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
Նախագահ՝ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պրն Տեր-Սիմոնյան,

Ավստրիական Կարիտաս Կազմակերպության Ֆելդքիրխի գրասենյակի կողմից 4003.4 եվրո ընդհանուր արժողությամբ, 19.258 կգ քաշով մարդասիրական բեռ է (մանրամասն ցուցակը՝ կից փաստաթղթի օրինակում) ուղարկվել «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի հասցեով, որը նախատեսվում է բաշխել Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի մարզերում և Երևան քաղաքում մեր կազմակերպության կողմից իրականացվող տարբեր ծրագրերի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ներկայացված կազմակերպությունների կարիքավոր մոտ 3000 շահառուների: Համապատասխան փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է ս.թ. նոյեմբերի 12-ի AC-252-12 նամակով:

Ի պատասխան Ձեր հարցման, կից ներկայացնում ենք ճանապարհածախսի հաշիվ ապրանքագրի պատճենը՝ վճարված մարդասիրական բեռն ուղարկողի կողմից: Ճանապարհածախսի ընդհանուր արժեքը կազմում է 4977.23 եվրո:

Հարգանքներով՝

Անահիտ Մխոյան
Գործադիր տնօրեն

2223

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք (ելք) 107-31235
26 11 20 12

Gebrüder Weiss 5/2

Gebrüder Weiss GmbH
Senderstrasse 34
A-6961 Wolfurt-Güterbahnhof

Telefon : 0043 5574 696-1949
Telefax : 0043 5 9006 1927
Unsere UID Nr. : ATU35613608
stefanie.hammerer@gw-world.com

**R E C H N U N G**

Caritas der Dioezese Feldkirch

Wichnergasse 22
6800 Feldkirch

| | |
|---|---|
| Nr. | : 03715249/148421 1 |
| Datum | : 13.11.2012 |
| Seite | : 1 von 1 |
| Ihre UID/Steuernr | : ATU37599309 |
| Referenz/Leistung | : 2753028584/06.11.2012 |
| Ladung/Service | : 2753031141/SEHOHFCL |
| Schiff | : CONTI CARTAGENA |
| B/L | : HOH2753028584 |
| ETD/DEP | : 14.11.2012 TRS Trieste |
| ETA/DES | : 08.12.2012 PTI Poti |

Auftragsnummer :

| | | | | |
|---|---|---|---|---|
| Absender | : Caritas der Dioezese Feldkirch | AT | 6800 | Feldkirch |
| Empfänger | : Armenian Caritas | AM | 3118 | Gyumri, Armenia |
| Lieferkondition | : DAP Geliefert an Ort Gyumri | | | |
| Verr.Gewicht | : 19258,00 kg | | | |

| Signo | Anzahl | Inhalt | Gewicht kg | Information |
|---|---|---|---|---|
| MSKU 114781-4 | 1 40H<br>82 PKT | 40' High Cube S.T.C.<br>Hilfsgueter | 19258,00 | CARITAFE01 XX3LD<br>Vol.Wgt 19258,0 |

| EAC | Leistungsbeschreibung: | UST | Betrag in EUR |
|---|---|---|---|
| 1100 | Fracht<br>ab FCA Feldkirch bis DAP Gyumri | 0,0 % | 4750,00 |
| 3250 | B/L Gebühr | 0,0 % | 65,00 |
| 5100 | Zollausgangsbehandlung | 0,0 % | 50,00 |
| 5800 | Abfertigung (ZAPP, BHT, TCC) | 0,0 % | 12,72 |
| 6460 | ISPS Gebühr | 0,0 % | 15,00 |
| 8100 | SVS/RVS<br>Lt. Praemientabelle | 0,0 % | 18,15 |
| 8300 | Transportversicherung<br>4 Promille vom Versicherungswert<br>EUR 16.589,23 | 0,0 % | 66,36 |

Beilagen:

Umsatzsteuerbefreite Beförderungs-
leistung in bzw aus einem Drittland

| | | | |
|---|---|---|---|
| Nettobetrag | | EUR | 4977,23 |
| 0,0 % | 4977,23 | | 0,00 |
| Bruttobetrag | | EUR | 4977,23 |

Zahlungsziel 10 Tage netto (23.11.2012)

---

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**նոյեմբերի 2012 թվականի N Մ - - Ա** 15/3
**քաղ. Երևան**

### «ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2012 թվականի նոյեմբերի -ի N , Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-1/ -12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N 02/ -12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի նոյեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ-5/ -12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի -ի N ՎՄ/3-4/ -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ԱԳԱՊԵ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 640000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք » ծրագիրը (կցվում է):

2. «ԱԳԱՊԵ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության
տնօրենների խորհրդի կողմից
«_7_» _նոյեմբերի_, 2012 թ.

## «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔ» 15/3

| | | |
|---|---|---|
| *1.* | *Ծրագրի նպատակը* | ➢ Ծրագրի նպատակն է բարելավել Քաշաթաղի շրջանի անապահով ընտանիքների սոցիալական պայմանները.<br>➢ Նվազեցնել շրջանում աղքատության և գործազրկության մակարդակը, ինչպես նաև բնակիչների արտահոսքը:<br>➢ Աջակցել Հայ Առաքելական եկեղեցուն՝ շրջանի երեխաների քրիստոնեական դաստիարակության գործում. |
| *2.* | *Ծրագրի բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի* | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| *3.* | *Բարեգործը.* | Ծրագիրը ֆինանսավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների միացյալ մեթոդիստական եկեղեցու Հյուսիսային Կարոլինայի և Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի թեմերի կողմից: |
| *4.* | *Ծրագիրը կատարողը.* | Ծրագիրն իրականացնում է ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպութան ՀՀ մասնաճյուղը, ՀՎՀՀ 01513717, ք. Երևան, Նիկոլ Դումանի 24 ա: |
| *5.* | *Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը* | Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին և ընդգրկում է ԼՂՀ Քաշաթաղի շրջանը: |
| *6.* | *Ծրագրի բյուջեն* | Ծրագրի բյուջեի կողմնորոշիչ արժեքն է 640,000 ԱՄՆ դոլար:<br>2013 թվականի կողմնորոշիչ արժեքն է 150,000 ԱՄՆ-ի դոլար,<br>2014 թվականի կողմնորոշիչ արժեքն է 150,000 ԱՄՆ-ի դոլար,<br>2015 թվականի կողմնորոշիչ արժեքն է 150,000 ԱՄՆ-ի դոլար,<br>2016 թվականի կողմնորոշիչ արժեքն է 150,000 ԱՄՆ-ի դոլար<br>40,000 ԱՄՆ դոլարը ավտոմեքենաների ձեռք բերման կողմնորոշիչ արժեքն է: |
